

2.3. ՀՀ պետական պարտք (ներքին և արտաքին)¹

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նախնական տվյալների ՀՀ պետական պարտքը (ներքին և արտաքին) 30.09.2001թ. դրությամբ կազմել է 529912,8 մլն. դրամ, որից ներքին պարտքը (պետական կարճաժամկետ պարտատոմսեր և ՀՀ ԿԲ վարկեր)՝ 34848,8 մլն. դրամ, իսկ արտաքինը (վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԲ-ին և ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի երաշխիքներով)՝ 495064,0² մլն. դրամ, կամ 893,391 մլն. ԱՄՆ դոլար:

Ներքին պարտք

2001թ. սեպտեմբերի 30–ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվել 19296,01 մլն. դրամի պետական կարճաժամկետ պարտատոմսեր և 9550,8 մլն. դրամի միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր, ինչը կազմել է ընդամենը 28846,81 մլն. դրամ և 2000թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել 6052,16 մլն. դրամով կամ 26,6%-ով:

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կառուցվածքն ըստ ժամկետայնության

(մլն. դրամ)

	1-10 շաբաթ	11-20 շաբաթ	21-30 շաբաթ	31-40 շաբաթ	41-52 շաբաթ	1-2 տարի	2-3 տարի	Ընդամենը
31.12.2000թ.	100.00	820.55	4467.97	5233.74	5900.00	6272.39	-	22794.65
31.03.2001թ.	1200.0	1200.0	7668.0	4433.74	4900.0	6131.6	1000.0	26533.3
30.06.2001թ.	0.0	700.0	6900.0	4233.74	5796.0	8211.6	900.0	26741.34
30.09.2001թ.	0.0	1300.0	2100.0	7300.0	8596.0	7250.8	2300.0	28846.8

ՀՀ Կենտրոնական բանկի վարկային գծի վերաձևակերպման արդյունքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրված արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը 30.09.2001թ. դրությամբ կազմել է 6000,0 մլն. դրամ՝ տարեսկզբի 7000,0 մլն. դրամի դիմաց:

2001թ. 9 ամիսների ընթացքում պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն ըստ ամիսների կազմել է.

Հունվար	25.9965%
Փետրվար	23.1682%
Մարտ	25.0479%
Ապրիլ	25.3785%
Մայիս	21.4225%
Հունիս	20.7089%
Հուլիս	19.4717%
Օգոստոս	17.8447%
Սեպտեմբեր	17.7070%

Ներքին պարտքի սպասարկման ծախսերը 2001թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 5283,5 մլն. դրամ:

¹ Սույն ենթաբաժնում զետեղված տվյալները տրամադրված են 02.11.2001թ. դրությամբ:

² Արտաքին պարտքի տվյալները հաշվարկված են 28.09.2001թ. ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դոլարի հաշվարկային փոխարժեքով (554,14 դրամ):

Արտաքին պարտք

ՀՀ արտաքին պետական պարտքը

	31.12.2000թ.		31.03.2001թ.		30.06.2001թ.		30.09.2001թ.	
	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ
Արտաքին պետական պարտք, ընդամենը	859.510	474.604	847.848	461.806	857.153	474.957	893.391	495.064
<i>այդ թվում՝</i>								
ՀՀ կառավարության պարտք	651.036	359.489	645.505	351.594	644.552	357.153	677.091	375.203
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	175.453	96.882	167.989	91.500	176.695	97.908	178.858	99.112
վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարության և ԿԲ երաշխիքներով	19.126	10.561	17.939	9.771	17.939	9.940	16.766	9.291
հատուկ ծրագրեր	13.895	7.672	16.415	8.941	17.967	9.956	20.676	11.458

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմը

	31.12.2000թ.		31.03.2001թ.		30.06.2001թ.		30.09.2001թ.	
	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ	նլն. ԱՄՆ դոլար	նլն. դրամ
Բազմակողմանի վարկատուներ	647.144	357.340	632.811	344.679	657.838	364.515	692.096	383.518
<i>այդ թվում՝</i>								
Համաշխարհային բանկ	397.475	219.478	391.089	213.018	410.073	227.226	439.279	243.422
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	34.378	18.983	35.243	19.196	33.050	18.313	33.688	18.668
Գյուղ. զարգացման միջազգային հիմնադրամ	18.436	10.180	18.176	9.900	18.516	10.260	19.270	10.678
Եվրոպական միություն	21.402	11.818	20.314	11.065	19.504	10.807	21.001	11.638
Արժույթի միջազգային հիմնադրամ	175.453	96.881	167.989	91.500	176.695	97.909	178.858	99.112
Երկկողմանի վարկատուներ	193.240	106.703	197.098	107.356	181.376	100.502	184.529	102.255
<i>այդ թվում՝</i>								
Ռուսաստան	114.658	63.312	114.658	62.452	96.487	53.464	96.443	53.443
Թուրքմենստան	12.759	7.045	12.759	6.950	11.847	6.565	10.936	6.060
Գերմանիա	5.701	3.148	6.696	3.647	8.598	4.764	9.502	5.265
Ֆրանսիա	2.467	1.362	2.342	1.276	2.248	1.246	2.421	1.342
ԱՄՆ	57.655	31.836	60.177	32.777	61.728	34.204	64.437	35.707
Ճապոնիա	0.000	0.000	0.466	0.254	0.468	0.259	0.790	0.438

ՀՀ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ 2001թ. 9 ամիսների ընթացքում աճել է 33,881 մլն. ԱՄՆ դոլարով: Միաժամանակ, 2001թ. 9 ամիսների ընթացքում ստացվել են վարկեր 19,306 մլն. ԱՄՆ դոլարի չափով և մարվել՝ 6,223 մլն. ԱՄՆ դոլարի չափով: Նշված տարբերությունը պայմանավորված է 1 SDR /1 USD փոխարժեքների տատանումներով:

Արտաքին պարտքի սպասարկման ծախսերը 2001թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 7237,1 մլն. դրամ: